ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2016 թվականի **թիվ 52** քաղ. Աստանա

Որպես շարժիչային վառելիք բնական գազ օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված բաղադրամասերի առանձին տեսակների մասով Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում և Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշ որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրի 42-րդ եւ 45-րդ հոդվածներին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում եւ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնում (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54 որոշման հավելված) կատարել հետեւյալ փոփոխությունները՝

ա) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական

գործունեության միասնական ապրանքային անվանացանկից հանել ստորաենթադիրքեր՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում ընդգրկել ստորաենթադիրքեր՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

գ) սահմանել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ համաձայն թիվ 3 հավելվածի.

դ) Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ծանոթագրությունները լրացնել հետեւյալ բովանդակությամբ 40Դ ծանոթագրությամբ՝

«[40Դ)] Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը՝ մաքսային արժեքից 0 (զրո) %-ի չափով, կիրառվում է 2016 թվականի սեպտեմբերի 2-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներում կատարել փոփոխություններ՝ համաձայն թիվ 4 հավելվածի:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 2-ից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի հուլիսի 11-ի
թիվ 52 որոշման

ՍՏՈՐԱԵՆԹԱԴԻՐՔԵՐ,

որոնք հանվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկից

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
	----- տեխնիկական նպատակների համար՝ նախատեսված քաղաքացիական օդանավերի համար՝[1]	
3926 90 970 6	----- ավիացիոն շարժիչների եւ/կամ քաղաքացիական օդանավերի արտադրության համար[5)]	
3926 90 970 8	----- այլ	—
+ 3926 90 970 9	----- այլ	—
+ 8481 10 990 9	----- այլ	—
+ 8481 30 990 9	----- այլ	—
8481 80 990 8	----- այլ	—

[1] ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3926 90 970 3 ստորաենթադիրքին հաջորդող՝ առանց ծածկագրի ստորաենթադիրք:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի խորհրդի

2016 թվականի հուլիսի 11-ի

թիվ 52 որոշման

ՍՏՈՐԱԵՆԹԱԴԻՐՔԵՐ,

որոնք ընդգրկվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկում

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Լրացուցիչ չափման միավորներ
+ 3926 90 970 4	-----բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված՝ 20 ՄՊա կամ ավելի աշխատանքային ճնշման համար հաշվարկված բնական գազի տարաներ[5)]	
	----- տեխնիկական նպատակների համար՝ նախատեսված քաղաքացիական օդանավերի համար՝	
+ 3926 90 970 5	----- ավիացիոն շարժիչների եւ/կամ քաղաքացիական օդանավերի արտադրության համար [5)]	
+ 3926 90 970 6	----- այլ	—
+ 3926 90 970 7	----- այլ	—
8481 10 990 2	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	
8481 10 990 8	----- այլ	—
8481 30 990 2	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5*]	
8481 30 990 8	----- այլ	—

	----- այլ՝[2]	
8481 80 990 3	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	
8481 80 990 7	------ այլ	—

[2] ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 80 990 2 ստորաենթադիրքին հաջորդող՝ առանց ծածկագրի ստորաենթադիրք:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի խորհրդի

2016 թվականի հուլիսի 11-ի

թիվ 52 որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքերի

ԱՏԳ ԱԱԾ ծածկագիրը	Դիրքի անվանումը	Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ (մաքսային արժեքից տոկոսներով՝ կամ եվրոյով, կամ ԱՄՆ դոլարով)
+ 3926 90 970 4	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված՝ 20 ՄՊա կամ ավելի աշխատանքային ճնշման համար հաշվարկված բնական գազի տարաներ[5)]	9,2[40դ)]
+ 3926 90 970 5	----- ավիացիոն շարժիչների եւ/կամ քաղաքացիական օդանավերի արտադրության համար [5)]	0
+ 3926 90 970 6	----- այլ	5
+ 3926 90 970 7	----- այլ	9,2
8481 10 990 2	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	7[39դ)]
8481 10 990 8	----- այլ	7

8481 30 990 2	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	7[39դ)]
8481 30 990 8	----- այլ	7
8481 80 990 3	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[3)]	7[39ղ)]
8481 80 990 7	------ այլ	7

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի
2016 թվականի հուլիսի 11-ի
թիվ 52 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

որոնք կատարվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներում

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի ապրիլի 19-ի թիվ 36 որոշմամբ հաստատված այն առանձին ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ կիրառվում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր՝ «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների միջեւ՝ մի կողմից, եւ Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջեւ՝ մյուս կողմից, ազատ առեւտրի մասին» 2015 թվականի մայիսի 29-ի համաձայնագրին համապատասխան, եւ տուրքերի նման դրույքաչափերի ցանկում՝

ա) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 10 990 9 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«8481 10 990 2	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	6,7 5,0 3,3 1,7 0 0 0 0 0 0
8481 10 990 8	----- այլ	6,7 5,0 3,3 1,7 0 0 0 0 0 0».

բ) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 30 990 9 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով.

«8481 30 990 2	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	6,7 5,0 3,3 1,7 0 0 0 0 0 0
8481 30 990 8	----- այլ	6,7 5,0 3,3 1,7 0 0 0 0 0 0».

գ) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 80 990 8 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«8481 80 990 3	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	8,2 7,3 6,4 5,5 4,5 3,6 2,7 1,8 0,9 0
8481 80 990 7	------ այլ	8,2 7,3 6,4 5,5 4,5 3,6 2,7 1,8 0,9 0»:

2. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 16 որոշմամբ հաստատված այն զգայուն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի փոփոխության մասին որոշումն ընդունվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից.

ա) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3926 90 970 6, 3926 90 970 8 եւ 3926 90 970 9 ծածկագրերով դիրքերը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«3926 90 970 4	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված՝ 20 ՄՊա կամ ավելի աշխատանքային ճնշման համար հաշվարկված բնական գազի տարաներ[5)]
3926 90 970 5	----- ավիացիոն շարժիչների եւ/կամ քաղաքացիական օդանավերի

արտադրության համար[5)]

3926 90 970 6 ----- այլ

3926 90 970 7 ---- այլ».

բ) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 10 990 9 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով.

«8481 10 990 2 ----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]

8481 10 990 8 ----- այլ».

գ) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 30 990 9 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«8481 30 990 2 ----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]

8481 30 990 8 ----- այլ».

դ) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8481 80 990 8 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«8481 80 990 3 ----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]

8481 80 990 7 ------ այլ»:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 59 որոշմամբ հաստատված այն ապրանքների ցանկում, որոնց նկատմամբ Ղազախստանի Հանրապետության կողմից, որպես Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը միանալու պայման ստանձնած պարտավորություններին համապատասխան, կիրառում են Եվրասիական

տնտեսական միության միասնական մաքսային սակագնի տուրքերի դրույքաչափերի համեմատ ավելի ցածր ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափեր, եւ տուրքերի այդ դրույքաչափերի ցանկում՝

ա) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3926 90 970 9 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով՝

«+ 3926 90 970 4	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված՝ 20 ՄՊա կամ ավելի աշխատանքային ճնշման համար հաշվարկված բնական գազի տարաներ[5)]	5****
+ 3926 90 970 7	----- այլ	5».

բ) 8481 80 990 8 ծածկագրով դիրքը փոխարինել հետեւյալ բովանդակությամբ դիրքերով.

«8481 80 990 3	----- բնական գազը որպես շարժիչային վառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների վրա տեղադրելու համար նախատեսված[5)]	
8481 80 990 7	------ այլ	5».

գ) լրացնել հետեւյալ բովանդակությամբ չորրորդ եւ հինգերորդ ծանոթագրություններ՝

«**** 2016 թվականի սեպտեմբերի 2-ից մինչեւ 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կիրառվում է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը:

**** 2016 թվականի սեպտեմբերի 2-ից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կիրառվում է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը:»: